

ՆՈՐ - ԶՈՒԴԱՅ.

ԽԵՀԱԳՐԻ-ԱԷՅԱՆ ԱՐԱՐԱՄ Ե. ՀԱՅԱԳՐՈՒՅ.

Հայկեան Հայրենասիրական Դպրոցս Քուրոյի
ի հերուն հետէ այսր շարունակաբար արժանի եղև
ընդունելոյ զՁերդ Պատուական Արարատ ամսագիր
ի նուէր. որով արդարեւ աշակերտք Դպրոցին
ի հեռուստ աստի զբնիկ Հայրենուց իւրեանց ճա-
շակեալ զճաշակն տեսական և բարոյական ազդի
ազդի հողեպարար արգասեաց գրականութեան,
նաև զՀայաստանեայց Անօրէից և զՔաղաքաց
տեղազրութիւնս ի նմին ընթեռնլով, զնախնեացն
մերոց զերջանիկ յուշ ածեն զիհասու

Ցոյր սակս և մեր ըստ բանականին թելազրու-
թեան ի ինդիր ելեալ ձանաչել թէ յումմէ և շն-
որչն, շնորհ զերափայլ, որ զօրէն արփիական
լուսոց ծաւալեալ տեսանի այսօր զՀայաստանեօրս
ի նորին Նախագահ Ժառանգաւորէն Սայր Ամո-
ռոց Սրբյ Էջմիածնի ի Սրբադնագյն 8. 8.
Գէորգյ Դ. Վեհափառ Կաթուղիկոսէն ա-
մենայն Հայոց. ահա Աստուածապարզե Հովուա-
պեսս այս հանգոյն թարզմանչացն մերոց՝ սրբոց
Սահակայ և Սնարոպայ շուք եղեալ Հայկական
գրականութեան, զան ի կիր արկանէ տալ բանալ
զԴպրոցս ի Հայս առ ի բարոյական և մտաւորա-
կան կրթութիւնս ազդիս լութեան. Տինա և մէք
ամենախոնարհ որդիքս նորին երանաշնորհ Հօրին
Հասարակաց՝ խորին ակնածութեամբ ի զիմաց
մերոց Դպրոցին մանկանց փութամք մատոցանել
զպտուղ շրթանցս, այն է զշնորհակալիս, իմասին
պարզեալ Արարատ ամսագրոց, և յապայս միշտ
ակնկալեալ ի վայելել զշնորհ նորին Հայրապե-
տական օրշնութեանցն।

Տեղի շնորհել դրուածոյս Հայցեմք ի Պատու-
ական Խմբազրութենէդ յէջս Արարատ ամսագրոց:

Պատիւ անձին Համարիմք մնալ ամենախոնարհ
ծառայք 2 եր

Մեծայէ լ Գ. Ա. Բ. Հ. Ք. Ռ. Ե. Լ. Ա. Հ.

Կաբէ-Դաշտ Օ. Բ. Ք. Ք. Ե. Ա. Հ.

Կաբէ-Նոր Հայէ Ենակելիքին Պ. Պ. Պ.

Ք Նոր. Զ. Հ. Հ.

1874 Յ. Ե. 25.

ՀԱՅՈՒԵՑՈՒՑԱԿ Ա. Զ. Կ Հ. Հ. Պ. Պ. Պ. Պ. Պ. Պ. Պ. Պ. Պ. Պ.

ԽԵՀԱԳՐԻ-ԱԷՅԱՆ ԱՐԱՐԱՄ Ե. ՀԱՅԱԳՐՈՒՅ.

Հօգաբարձութիւնս առաքելով ընդ այսմ զՀա-
շուեցուցակ տնտեսական և ուսումնական մասանց
Պ. Վ. Ա. Հ. Ա. Հ.

	Թիւ	Առաջամար-
1	1	
1	2	Թիւ Առաջաց.
1	1	
1	9	Թօշակատաց
	9	Զրիավարժից
	18	
		Աղքատաց
3	7	
16	6	
3	15	
21	21	
19	43	
102	51	
142	36	Ընդ ամ սնն

անցեալ Նոյեմբեր ամսոյն 1871 ամի, խնդրէ Հըրատարակել զայնս ի գիտութիւն համազգայնոց մերոց *):

Սուստութեալ նիւթե Հունվարութեանց

թ. 22

ի Դ. Շ. Պ.

ի 29 Փետր. 1872:

ՄԵԾՎՊԵՏԻ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.

Ամենայն որ և իցէ ազգային և հասարակութեան գործ եմէ միայն վաստակասէր և բարեխիղճ գործակատար անձանց ձեռքով կատարվելու լինի նա կը հասնի իւր օգտակար վահճանին, նա մանաւանդ՝ որ գործոյ կառավարիչները եմէ միշտ սովորաբար տարիզիլին նոյն իսկ ազգին կամ հասարակութեանը ծմբարութեամբ հաշիւ ու համար տան ինքեանց յանձնուած գործոյ մասին: Այսպէսուրեմն՝ Վայրայ Հայոց Հոգեւոր Պարոցը որպէս 2եր ամենցուն սեպհականութիւն՝ որ յանձնուած ու ապաւմնած էք մեր հոգացողութեան, և ուր որ՝ բարոյապէս և իմացականապէս կրթվում են 2եր 150-ի չափ մանկունքը, ահա թէ նախկին և արդի ջանապիր և սրտացաւ վաստակաւորների ձեռքով, և թէ՝ 2եր յատուկ և բարեմիտ օգնականութեամբ և հովանաւորութեամբ, բարեյաջող և կարելին յառաջադիմութեամբ կատերեց իւր Երրորդ Տրեշրջանը: Այս պատճառաւ՝ այսօր նորա Հոգաբարձութիւնը պատիւ ունեցաւ հրաւիրել 2եղ Մեծապանփիւ Հանդիսականք՝ հաշիւ ու համար տալու 2եզ, թէ նորա ուսումնական՝ և թէ նորա տարեկան Մուշ և Մուտքա արդեանց հաշիւների մասին:

Էնդէս վաղուց ևս յայսնի է 2եղ, Պարոցիս պահպանութեան ալբիւրը դցանում է զիստարապէս քաղաքիս երկու եկեղեցեաց դրամազգինոց տոկոսիներէն, — սրբոյն Գէորգայ ուխտատեղւոյ եկեղեցւոյ արդիւնքներից, — թոշակատու աշակերտաց վարձերից, — և բարեկապաշտօն ժողովուրոյ նուելոներից: Ահա, Պարոցիս տարեկան մանրամասն Մուշ և Մատուց Հաշուեցուցակը, 1870 թուականի Նոյեմբերի 1-իցն սկսած, մինչ ց1-ն Նոյեմբերի 1871 ամի:

Մուշ յընթաց 18⁷⁰₇₁ ամաց
ի Ե. Ա. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. :

Առ. 1-ն Նոյեմբերի 1870 ամի մը-
նացեալ էին պատրիստի դրամք . . . 297 14¹₂

(*) Հոգաբարձութիւն գրադուած լինելով երկու գործոց գործերով, և մանաւանդ օքորդաց ումարիսման գործի և մանավանդութեան կը պակի բացման հոգերով, մինչև այսօր ուշացրոց այս համեմերը ուղարկել նմբագրութեանն Աբրուսոց:

Մի հատ զրամատան տոկոսարեր	100.
տոմսակ արժողութեամբ	100.
Ստացեալ դրամք յեկեղեցական գումարաց	1862 50
Գանձանակաղրամք ժողովեալ յեկեղեցիս	232 7
Վարեալ վարձք թոշ. աշակերտաց	411
Ի նուիրաբերութեանց բարեգործ անդամոց դպրոցիս	346
Ի վաճառմանէ դրեանց	74 10
Ի տուգանաց վարժապետաց, վասն ի բաց թողեալ դասուցն . . .	7 42
Գումարն է	3326 23 ¹ ₂
ՕՐԱՀԻ + յընթաց 18⁷⁰₇₁ ամաց	
ի Ե. Ա. Ե. Ե. Ե. Ե. Ե. Ե. :	
Ոռձկաղրամք վարժապետաց և վերակացուի	1731 66
Աարձ տան ուր կայր Պարոցն յանցեալ ամի	310
Ոռձկաղրամք պահպանի	133
Ի գին գնեալ դրեանց	190 25
Ի մասին արագացուցաներց զա- ւարտ շինութեան տան դպրոցին տուեալ է	200
Մանր ծախք ի պէտս զանազան կարեաց	110
Ոռձկաղրամք դրազի վասն մի և կէս ամսոյ	9
Գումարն է	2684 25

Ի բաց հանելով Ռախմբը Մուտքից, մնում են առ. 1-ն Նոյեմբերի 1871 ամի, պատրիստի դրամք ընկ տոկոսարեր տոմսակի, վէց հորին-ը մէկ հանուն ունի լինու հուական:

Այս տեղ կէտ գնելով Պարոցիս մտից և ծա-
խուց արգեանց տարեկան հաշուին, պարոք կհա-
մարինք մեր վրայ այժմ՝ Աշել Պարոցիս Աշել-
պան և Հիւանան Մատնագարանների մասին, և
ապա մեր առ ի սրտէ շնորհակալութիւնը յայտ-
նել այն աղնիւ անձանց, որոնք գրոցիս բարելա-
ւութեանը ձեռնուու են գտանված:

Ներկայ տարսոյ Հոկտեմբերի 19ին՝ Հոգաբարձութիւնս հաշուելով Աշել-պան Մ-թերեւուն մէջ՝ մէջ գտանված հին և նոր դրեալքը, ժապատի-
նեալ մատեանով յանձնեց Պարոցիս վերակացու
և ուսուցիչ պ. Գէորգ Նրբակեանին 642 հատ
զանազան գասական և այլ դրեալք, արժողու-
թեամբ 323 ուորլի 15 կոպէկի:

Նմանապէս երկու ժապատինեալ մատեաններով
պահպանվում են Հիւանան Մ-թերեւուննէ մէջ, և
կան տեսակ տեսակ դրեանք, որոնք ընծայված են
զանազան յարգելի անձնիներից, որք են՝